

<b>Hair Salons</b>	<b>Վարսավիրանոցներ</b>
<p><b>What hair services are allowed under the new guidance?</b></p>	<p><b>Վարսավիրանոցային ի՞նչ ծառայություններ են թույլատրվում նոր ուղեցույցներով:</b></p>
<p>Under the new guidance, haircuts, weaves and extensions, braiding, lock maintenance, wig maintenance, hair relaxing treatments, and color services can be provided. Services that cannot be performed with face coverings on both the worker and customer or that require touching the customer’s face, for example, eyelash services, eyebrow waxing and threading, facials, etc., are still not allowed.</p>	<p>Նոր ուղեցույցներով թույլատրվում է մազ կտրելու, մազերի մեջ թելեր ներհյուսելու և երկարացնելու, մազերը հյուսելու, մազերի խնամքի, կեղծամների խնամքի, մազերի ուղղման հետ կապված խնամքի և ներկման ծառայությունների տրամադրումը: Այն ծառայությունները, որոնք հնարավոր չէ իրականացնել և՛ հաճախորդի, և՛ աշխատողի կողմից դիմակ կրելու պարագայում, կամ որոնք պահանջում են դիպչել հաճախորդի դեմքին, օրինակ՝ թարթիչների երկարացման, հոնքերի ձևավորման ծառայությունները, մոմով կամ թելով մազահեռացումը, դեմքի խնամքը և այլն, դեռևս չեն թույլատրվում:</p>
<p><b>How will I be protected from the spread of COVID-19 when I go get my haircut?</b></p>	<p><b>Ինչպե՞ս ես կպաշտպանվեմ COVID-19-ի տարածումից, երբ գնամ մազերս կտրելու:</b></p>
<p>Salons are not returning to business-as-usual. Physical distancing measures will be in place, personal protective equipment must be worn. Salon operators must remove high-touch items, such as magazines and self-serve coffee. Stylists will only be able to serve one client at a time (previously, stylists might cut a client’s hair while another client’s hair was drying or processing).</p>	<p>Հարդարման սրահները չեն աշխատելու սովորականի պես: Ֆիզիկական հեռավորության միջոցառումները պետք է կատարվեն, պետք է կրել անձնական պաշտպանիչ պարագաներ: Հարդարման սրահների աշխատողները պետք է հեռացնեն բազմակի հպման իրերը, օրինակ՝ ամսագրերը, սուրճի ինքնասպասարկման սարքերը: Վարսահարդարը միևնույն ժամանակ պետք է սպասարկի միայն մեկ այցելուի (նախկինում վարսահարդարը կարող էր կտրել մեկ այցելուի մազերը, երբ մյուսի մազերը չորանում էին կամ մշակվում):</p>
<p>Salon operators must also implement new, stringent cleaning and disinfecting protocols.</p>	<p>Հարդարման սրահներում աշխատողները պետք է նաև կիրառեն մաքրման և ախտահանման նոր, ուժեղացված կանոններ:</p>
<p><b>How risky is it to get a haircut?</b></p>	<p><b>Որքա՞ն ռիսկային է մազ կտրելը:</b></p>

<p>Los Angeles County would not have sought to reopen this service-based sector if the metrics that show our progress indicated uncontrolled COVID-19 infection rates.</p>	<p>Լոս Անջելես Վարչաշրջանը չի ձգտի վերաբացել ծառայությունների ոլորտները, եթե մեր հաջողությունների ցուցանիշները COVID-19-ով վարակման անվերահսկելի մակարդակ ցույց տան:</p>
<p>The protocols in place are there to protect our residents. As long as business owners/operators and clients follow the guidelines, the risk is reduced.</p>	<p>Առկա կանոնները պետք է կիրառվեն մեր բնակիչներին պաշտպանելու համար: Եթե բիզնեսի սեփականատերերը/աշխատակիցները և հաճախորդները հետևում են ուղեցույցներին, ռիսկը նվազում է:</p>
<p><b>Do I have to get my temperature checked before going inside?</b></p>	<p><b>Իմ ջերմությունը չափվելո՞ւ է՝ նախքան ներս մտնելը:</b></p>
<p>It isn't required, but some businesses may choose to check the customer's temperature before moving forward with the appointment.</p>	<p>Դա չի պահանջվում, բայց որոշ բիզնեսներում կարող են որոշել չափել հաճախորդի ջերմությունը՝ նախքան նախատեսված գործողություններն սկսելը:</p>
<p>Employees and customers will be screened for symptoms, including cough and fever. Clients feeling unwell should reschedule their appointment.</p>	<p>Աշխատակիցները և հաճախորդները կստուգվեն՝ պարզելու ախտանիշների առկայությունը՝ ներառյալ հազը և տաքությունը: Վատ զգացող հաճախորդները պետք է վերափոխեն իրենց ժամադրությունը:</p>
<p><b>Can I get my hair blow dried?</b></p>	<p><b>Կարո՞ղ եմ չորացնել իմ մազերը:</b></p>
<p>Yes.</p>	<p>Այո:</p>
<p><b>Can I get my hair washed?</b></p>	<p><b>Կարո՞ղ եմ լվանալ իմ մազերը:</b></p>
<p>Yes.</p>	<p>Այո:</p>
<p><b>Can I get my hair styled?</b></p>	<p><b>Կարո՞ղ եմ հարդարել իմ մազերը:</b></p>
<p>Yes.</p>	<p>Այո:</p>
<p><b>Can I get braids?</b></p>	<p><b>Կարո՞ղ եմ հյուսել իմ մազերը:</b></p>
<p>Yes.</p>	<p>Այո:</p>
<p><b>Can I get a weave or hair extensions?</b></p>	<p><b>Կարո՞ղ եմ թելերով հյուսել կամ երկարացնել իմ մազերը:</b></p>
<p>Yes.</p>	<p>Այո:</p>
<p><b>Can I get my hair colored?</b></p>	<p><b>Կարո՞ղ եմ ներկել իմ մազերը:</b></p>
<p>Yes.</p>	<p>Այո:</p>

<b>Can I get my hair chemically treated?</b>	<b>Կարո՞ղ եմ քիմիական մշակման ենթարկել իմ մազերը:</b>
Yes.	Այո:
<b>Do I have to wear a mask? How can I get a haircut with it on?</b>	<b>Ես պե՞տք է դիմակ կրեմ: Ինչպե՞ս կկարեն իմ մազերն այդ դեպքում:</b>
Yes, both you and the stylist must wear face coverings. Customers are encouraged to wear face coverings with ear loops to ensure the face covering does not interfere with the hair service.	Այո, և դուք և ձեր վարսահարդարը պետք է դիմակ կրեք: Հաճախորդներին խորհուրդ է տրվում ականջների ամրացնող թելերով դիմակ կրել, որպեսզի դիմակը չխանգարի նրանց՝ մազերի հետ աշխատելուն:
<b>Does my hairstylist have to wear a mask and/or gloves?</b>	<b>Պե՞տք է իմ վարսահարդարը դիմակ և/կամ ձեռնոցներ կրի:</b>
Yes, your hairstylist must wear a face covering and may wear gloves.	Այո, Ձեր վարսահարդարը պետք է դիմակ և ձեռնոցներ կրի:
<b>Can I hang out at the salon?</b>	<b>Կարո՞ղ եմ ես նստել հարդարման սրահում:</b>
No. We know salons are places of comfort and friendship, but at this time, in order to adhere to physical distancing requirements, only people with scheduled services are allowed to be in the salon while the service is ongoing. Once the appointment is finished, clients must leave.	Ոչ, մենք գիտենք, որ հարդարման սրահները հարմարավետության և ընկերության տեղ են, բայց այս ժամանակներում, որպեսզի հետևենք ֆիզիկական հեռավորություն պահելու պահանջներին, միայն այն մարդկանց ներկայությունն է թույլատրվում, ում նշանակված ծառայություն է մատուցվում: Դրանից հետո հաճախորդը պետք է հեռանա:
<b>What is the best way to pay?</b>	<b>Ո՞րն է վճարելու լավագույն տարբերակը:</b>
Cashless transactions are strongly encouraged.	Անկանխիկ գործարքները խստորեն խրախուսվում են:
<b><u>Related Services</u></b>	<b><u>Նմանատիպ ծառայություններ</u></b>
<b>Can I get my eyebrows or face waxed?</b>	<b>Կարո՞ղ եմ օգտվել հոնքերի կամ դեմքի մոմով մազահեռացման ծառայություններից:</b>
No, services that require that a client remove a mask and/or that require the technician touch the client’s face are not allowed.	Ոչ, չեն թույլատրվում այն ծառայությունները, որոնք պահանջում են, որ այցելուն հանի դիմակը և/կամ պահանջում են դիպչել այցելուի դեմքին:

<b>Can I get a facial?</b>	<b>Կարո՞ղ եմ օգտվել դիմահարդարի ծառայություններից:</b>
No, services that require that a client remove a mask and/or that require the technician touch the client’s face are not allowed.	Ոչ, չեն թույլատրվում այն ծառայությունները, որոնք պահանջում են, որ այցելուն հանի դիմակը և/կամ պահանջում են դիպչել այցելուի դեմքին:
<b>Can I get a massage?</b>	<b>Կարո՞ղ եմ ես մերսում ստանալ:</b>
No, spa services are not included in this phase of reopening.	Ոչ, ՄՊԱ ծառայությունները չեն ներառված վերաբացման այս փուլում:
<b>Can I get my nails done?</b>	<b>Կարո՞ղ եմ օգտվել մատնահարդարի ծառայություններից:</b>
No, nail salons are not open at this time.	Ոչ, մատնահարդարման սրահները ներկա պահին բաց չեն:
<b>Can I get a pedicure?</b>	<b>Կարո՞ղ եմ ես պեդիկյուր անել:</b>
No, nail salons are not open at this time.	Ոչ, մատնահարդարման սրահները ներկա պահին բաց չեն:
<b>Can I get eyelash extensions?</b>	<b>Կարո՞ղ եմ ես երկարացնել թարթիչներս:</b>
No, services that require that a client remove a mask and/or that require the technician touch the client’s face are not allowed.	Ոչ, չեն թույլատրվում այն ծառայությունները, որոնք պահանջում են, որ այցելուն հանի դիմակը և/կամ պահանջում են դիպչել այցելուի դեմքին:
<b><u>Barbershops</u></b>	<b><u>Տղամարդկանց վարսավիրանոցներ</u></b>
<b>Can I get my beard trimmed?</b>	<b>Կարո՞ղ եմ ես կտրել մորուքս:</b>
No, services that require that a client remove a mask and/or that require the technician touch the client’s face are not allowed.	Ոչ, չեն թույլատրվում այն ծառայությունները, որոնք պահանջում են, որ այցելուն հանի դիմակը և/կամ պահանջում են դիպչել այցելուի դեմքին:
<b>Can I get my face shaved?</b>	<b>Կարո՞ղ եմ ես դեմքս սափրել:</b>
No, services that require that a client remove a mask and/or that require the technician touch the client’s face are not allowed.	Ոչ, չեն թույլատրվում այն ծառայությունները, որոնք պահանջում են, որ այցելուն հանի դիմակը և/կամ պահանջում են դիպչել այցելուի դեմքին:
<b>Can I get my eyebrows or face waxed?</b>	<b>Կարո՞ղ եմ օգտվել հոնքերի կամ դեմքի մոմով մազահեռացման ծառայություններից:</b>
No, services that require that a client remove a mask and/or that require the technician touch the client’s face are not allowed.	Ոչ, չեն թույլատրվում այն ծառայությունները, որոնք պահանջում են,

	որ այցելուն հանի դիմակը և/կամ պահանջում են դիպչել այցելուի դեմքին:
<b>Do I have to wear a mask? How can I get a haircut with it on?</b>	<b>Ես պե՞տք է դիմակ կրեմ: Ինչպե՞ս կկտրեն իմ մազերն այդ դեպքում:</b>
Yes, both you and the stylist must wear a mask. Customers are encouraged to wear	Այո, և՛ դուք, և՛ ձեր վարսահարդարը պետք է դիմակ կրեք:
face coverings with ear loops to ensure the face covering does not interfere with the hair service.	Պետք է ականջներին ամրացնող թելերով դիմակ կրել, որպեսզի դիմակը չխանգարի նրանց՝ մազերի հետ աշխատելուն:
<b>Does my barber have to wear a mask and/or gloves?</b>	<b>Պե՞տք է իմ վարսավիրը դիմակ և/կամ ձեռնոցներ կրի:</b>
Yes, your barber must wear a face covering and may wear gloves.	Այո, Ձեր վարսավիրը պետք է դիմակ և ձեռնոցներ կրի:
<b>Can I hang out at the barbershop?</b>	<b>Կարո՞ղ եմ նստել տղամարդկանց վարսավիրանոցում:</b>
No. We know barbershops are places of comfort and friendship, but at this time, in order to adhere to physical distancing requirements, only people with scheduled services are allowed to be in the salon while the service is ongoing. Once the appointment is finished, clients must leave.	Ոչ, մենք գիտենք, որ տղամարդկանց վարսավիրանոցները հարմարավետության և ընկերության տեղ են, բայց այս ժամանակներում, որպեսզի հետևենք ֆիզիկական հեռավորություն պահելու պահանջներին, միայն այն մարդկանց ներկայությունն է թույլատրվում, ում նշանակված ծառայություն է մատուցվում: Դրանից հետո հաճախորդը պետք է հեռանա: